

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի 2011 թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին

1. Հրատարակվել է «Հայոց պատմություն» ակադեմիական բազմահատորյակի երրորդ հատորի առաջին գիրքը, որն ընդգրկում է նոր պատմության՝ XVII դ. երկրորդ կեսից մինչև XIX դ. վերջն ընկած շրջափուլը: Այն ներառում է XVII-XIX դդ. հայ ազատագրական շարժումների ու ծրագրերի, Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման, Հայկական հարցի միջազգայնացման, ազատագրական խմբակների ու կուսակցությունների առաջացման, 1890-ական թթ. հայկական կոտորածների, ինքնապաշտպանական մարտերի, տվյալ ժամանակահատվածի սոցիալ-տնտեսական ու մշակութային պատմության հիմնահարցերը: Հատորը շարադրված է հարուստ արխիվային նյութի, հրատարակված փաստաթղթերի և առկա գիտական գրականության համակողմանի օգտագործմամբ:

2. Հրատարակվել է «Հայոց պատմություն» ակադեմիական բազմահատորյակի չորրորդ հատորի առաջին գիրքը, որն ընդգրկում է 1918-1945 թթ.: Այն շարադրված է արխիվային նորահայտ նյութերի, հրատարակված փաստաթղթերի ժողովածուների և առկա գիտական գրականության համակողմանի օգտագործմամբ:

3. Հրատարակվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ.գ.դ. Գևորգ Ստեփանյանի «Բաքու քաղաքի հայության պատմությունը (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)» մենագրությունը, որում ներկայացվում է Բաքու քաղաքի հայ բնակչության պատմաժողովրդագրական համահավաք պատկերը՝ վաղ ժամանակներից մինչև 1990 թ. հունվարը ներառյալ: Մատենագրական և վիճակագրական աղբյուրների համալիր ուսումնասիրությամբ հիմնավորվել է Ապշերոնյան թերակղզում և Բաքվում հայերի տեղաբնակ ու մշակութակերտ լինելը:

Սկզբնաղբյուրների քննությամբ ցույց է տրված, որ Բաքու քաղաքն Արևելյան Այսրկովկասում XX դարի երկրորդ տասնամյակի վերջում «Ադրբեջան» անվամբ արհեստածին պետության մայրաքաղաք է դարձել եկվոր թյուրք-օղուզների հետևորդների՝ 1930-ական թթ. վերջից «ադրբեջանցի» հորջորջված կովկասյան թաթարների կողմից տեղաբնիկ ժողովուրդների (հայեր, թաթեր, լեզգիներ և այլն) ցեղասպան քաղաքականության, ուժացման, քաղաքակրթական արժեքների կողոպտման ու ոչնչացման միջոցով:

4. Հրատարակվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող, պ.գ.թ. Դավիթ Թինոյանի «Կիլիկիո հայոց թագավորությունը և ինքնիշխան կազմավորումները 1320-1424 թթ.» մենագրությունը, որում հայկական և օտարալեզու աղբյուրների համադիր քննությամբ

ներկայացվում է Կիլիկյան հայկական պետականության թուլացման և կործանման շրջանի (1320-1424 թթ.) նվազ ուսումնասիրված և հայ պատմագիտության մեջ վիճելի համարվող հիմնահարցերը:

5. Հրատարակվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ.գ.դ. Գայանե Մախմուրյանի կողմից կազմված «Армения в документах Государственного департамента США 1917-1920 гг.» փաստաթղթերի և նյութերի ժողովածուն, որում թարգմանաբար ներկայացված են Հայաստանի ազգային արխիվում պահվող ԱՄՆ դեպարտամենտի փաստաթղթերն ու նյութերը, որոնք պատմում են ԱՄՆ-ի քաղաքական կուրսի և օգնության տրամադրման մասին 1918-1920 թթ. Հայաստանում դժվար դրության ժամանակ, 1919 թ. Փարիզի կոնֆերանսում հայերի ապագայի և նրանց պետության մասին բանացկությունների մասին, Ջ. Հարբորդի ռազմական առաքելության ուղևորության և հանձնարարությունների և ամերիկյան վարչակարգի հետ Հայաստանի հանրապետության ղեկավարության գործունեության մասին: Ընթերցողը կծանոթանա Հայաստանի հանրապետության ղեկավարության ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի և ապագա նախագահ Հ. Հուվերի հետ գրագրությանը, փաստորեն կիմանա ամեն ինչ, ինչ որ վերաբերում է Հայաստանին փարիզյան կոնֆերանսում տեղի ունեցած:

6. Հաշվետու տարում ինստիտուտի գիտաշխատողներն ավարտել են «Հայոց պատմություն» ակադեմիական քառահատորյակի երկրորդ, երրորդ և չորրորդ հատորների երկրորդ գրքերի խմբագրման աշխատանքները: Աշխատանքներ են տարվում նաև ռուսերեն և անգլերեն լեզուներով «Հայոց պատմություն» ակադեմիական երկհատորյակների պատրաստման ուղղությամբ:

2. 2011 թ. ինստիտուտի ձեռքբերած նշանակալի արդյունքներն են պետբյուջեից ֆինանսավորվող բազային երեք թեմաների գծով կատարած զգալի աշխատանքները, հրատարակած մենագրություններն ու ժողովածուները, տասնյակ գիտական հոդվածները և հրապարակումները:

«Աղբյուրագիտություն և պատմագրություն» թեմայի (ղեկավար՝ պ. գ. թ. Արտաշես Շահնազարյան) շրջանակներում լույս է տեսել ինստիտուտի նախկին աշխատակից Նորայր Դանիելյանի «Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի պատմահոգևոր համակարգը և Աստվածաշունչը» աշխատությունը, որում ներկայացված է Մեսրոպ Մաշտոցի՝ հայ գրերի գյուտով (405 թ.) Աստվածաշնչի գրավոր թարգմանվելուն հաջորդած ժամանակաշրջանում, հայ պատմիչների և հատկապես Մովսես Խորենացու (V դ.)՝ պատմական և հոգևոր հարցերում ուշադրության կենտրոնում լինելը: Հատուկ հետազոտված է Մովսես Խորենացու

«Պատմութիւն Հայոց»-ում պատմական իրադարձությունների ու հոգևոր երևույթների փոխշաղկապվածությունը նախաքրիստոնէական ու քրիստոնէական դարաշրջանների արժեքային ամբողջական համակարգում:

Նույն թեմայի շրջանակներում լույս է տեսել պ.գ.դ. Վարուժան Պողոսյանի «В окружении историков (сборник статей и рецензий)» հոդվածների ու գրախոսությունների ժողովածուն, որի առաջին բաժնում ներկայացված են խորհրդային ականավոր պատմաբաններ Վ. Դալինի, Ա. Հովհաննիսյանի, Մ. Ներսիսյանի, Գ. Կուչերենկոյի կերպարները, բնութագրումները, որոնց հետ հեղինակը բախտ է ունեցել աշխատել և շփվել երկար տարիներ ԽՍՀՄ և ՀԽՍՀ գիտությունների ակադեմիաներում: Հոդվածներից մեկը նվիրված է 18-րդ դարի Ֆրանսիական հեղափոխության պատմության խոշորագույն մասնագետներից Ժ. Գոդշոյին: Գրքի երկրորդ բաժնում զետեղված են հեղինակի գրախոսությունները Ֆրանսիական հեղափոխության պատմությանը, նապոլեոնյան դարաշրջանին, ինչպես նաև Ֆրանսիական հեղափոխության պատմագրությանը վերջին քառորդ դարում նվիրված խորհրդային և ռուսական հրատարակություններին, որոնց գերակշիռ մասը հրատարակվել է 1990-2010 թթ. Ռոբեսպիերյան հետազոտություններ կազմակերպության «Исторические анналы Французской революции» պարբերականում:

«Պետականության զարգացման փուլերը Հայաստանում (հնագույն ժամանակներից մինչև 1918 թ.)» թեմայի (ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Մելքոնյան) շրջանակներում լույս է տեսել Աշոտ Մելքոնյանի «Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր» ժողովածուն, որը հիմնականում ընդգրկում է Հայաստանի, մասնավորապես Արևմտյան Հայաստանի, Ջավախքի և Լոռու ժողովրդագրության հիմնահարցերին վերաբերող հեղինակի հոդվածների ընտրանին:

Նույն թեմայի շրջանակներում լույս է տեսել Արմեն Հայրապետյանի աշխատասիրությամբ հրատարակության պատրաստած «Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIX դ. – XX դ. սկիզբ)» փաստաթղթերի և նյութերի ժողովածուն, որն արխիվային վիճակագրական փաստաթղթերի հարուստ հավաքածու է՝ բաղկացած 325 աղյուսակներից, որոնք վերաբերում են քննության ենթակա ժամանակահատվածում Ալեքսանդրապոլի գավառի բնակչության էթնոկոնֆեսիոնալ իրավիճակի, բնակավայրերի տեղագրության, բնակչության տեղաշարժերի, նրա ազգային կազմի խնդիրներին, ինչպես նաև լույս են սփռում արևմտահայերի՝ դեպի գավառ պարբերաբար կրկնվող գաղթերի, ըստ բնակության նոր վայրերի նրանց տեղաբաշխման և գավառի բնակչության էթնոկոնֆեսիոնալ պատկերում այդ գաղթերի թողած ազդեցության վրա:

«Հայաստանը և հայությունը նորագույն շրջանում: Հայկական հարց:» թեմայի (ղեկավար՝ պ. գ. թ. Կարեն Խաչատրյան) շրջանակներում լույս է տեսել Բենիամին Պողոսյանի «Թուրք-ամերիկյան հարաբերությունները և ԱՄՆ կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը 1991-2007 թթ.», որը նվիրված է թուրք-ամերիկյան հարաբերություններում ԱՄՆ կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրի ունեցած դերի վերլուծությանը:

Նույն թեմայի շրջանակներում լույս է տեսել Հովհաննես Ալեքսանյանի «Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917-1941 թթ.» աշխատությունը, որում ներկայացվում է կազմավորված Խորհրդային Ռուսաստանի, այնուհետև ԽՍՀՄ տարածքի հայկական համայնքերի հասարակական-քաղաքական, հոգևոր, մշակութային, կրթական կյանքը, խորհրդային հանրապետություններում բնակվող հայության թվաքանակը, տեղաբաշխման շրջանները, մայրենի լեզվին տիրապետելու աստիճանն ու գրագիտությունը: Լուսաբանվում են ստալինյան բռնաճշումների տարիներին հայկական հասարակական-քաղաքական շրջանակներին ու ազգային հաստատություններին հասցված կորուստները, ինքնությունն ու ազգային արմատները պահելու հայության փորձերը:

Ուսումնասիրությունն առաջին փորձն է՝ ուրվագծելու խորհրդային հանրապետությունների հայության պատմությունը:

Նույն թեմայի շրջանակներում լույս է տեսել «Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու»-ն (Կազմողներ և խմբագիրներ՝ Կ. Խաչատրյան, Հ. Աբրահամյան), որում ընդգրկված փաստաթղթերն ու նյութերն ընդգրկում են 1923-1988 թթ.: Դրանք հիմնավորում են այն փաստը, որ խորհրդային ժամանակաշրջանում համայն հայությունը՝ թե՛ Խորհրդային Հայաստանում և ԼՂԻՄ-ում, և թե՛ Սփյուռքում, պայքարել է Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար: Նյութերը բացահայտում են նաև Լեռնային Ղարաբաղի հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի առանձին դրվագները:

Նույն թեմայի շրջանակներում լույս է տեսել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (1991 թ. օգոստոս-1992 թ. հունվար), փաստաթղթեր» ժողովածուն (Կազմող Հրանտ Աբրահամյան), որում տեղ գտած փաստաթղթերը արտացոլում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծման գործընթացը: Օգտվելով ազգերի ինքնորոշման իրավունքից՝ 1991 թ. սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը որոշեց երկրամասը հայտարարել անկախ հանրապետություն: Եվ, չնայած ԼՂՀ դեռևս մնում է միջազգայնորեն չճանաչված

հանրապետություն, այնուամենայնիվ, այստեղ կառուցվում է ազատ ու անկախ պետականություն:

Նույն թեմայի շրջանակներում լույս է տեսել ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պ.գ.դ. Կլիմենտ Հարությունյանի «Участие сынов армянского народа в героической обороне Ленинграда (10 июля 1941 г.–9 августа 1944 г.)» մենագրությունը, որում ՌԴ ՊՆ Կենտրոնական, ՌԴ ՊՆ Կենտրոնական ռազմածովային և այլ արխիվներից նորահայտ փաստաթղթերի հիման վրա, համապատասխան գրականության և մամուլի նյութերի հիման վրա համառոտ լուսաբանվում է հայ ժողովրդի զավակների ներդրումը Հայրենական մեծ պատերազմի տարիներին Լենինգրադի հերոսական պաշտպանությանը: Հավելվածում բերված է Լենինգրադի համար մղված մարտին Խորհրդային Հայաստանից հայ ռազմիկների ոչ ամբողջական ցուցակը:

Նույն թեմայի շրջանակներում լույս է տեսել ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պ.գ.դ. Կլիմենտ Հարությունյանի «Հայ զորավարներ» աշխատությունը, որում համառոտակի լուսաբանված է Հայրենական մեծ պատերազմի տարիներին իրենց սխրանքներով աչքի ընկած հայ զորավարների, զորահրամանատարների, հերոսների և Փառքի շքանշանի լրիվ ասպետների գործունեությունը, տրված է նրանց լուսանկարները:

Հրատարակվել է «Ծովի մշակույթը՝ մարդկության մշակույթն է քաղաքակրթությունների երկխոսությունում» «Այաս» Ծովային Հետազոտությունների Ակումբի 25-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերը:

Հրատարակվել է «Մեծ Եղեռն. Դատապարտումից հատուցում» խորագրով հոդվածների ժողովածուն, որում զետեղված են Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցին նվիրված գիտաժողովի զեկուցումներից:

Հրատարակվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» գիտական հոդվածների ժողովածուի 12-րդ հատորը, որում զետեղված աշխատություններն աղբյուրագիտական լայն հենքի վրա լույս են սփռում Հայոց հին, միջնադարյան, նոր և նորագույն պատմության մի շարք հիմնահարցերի վրա: Հոդվածների զեկուցվել են ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների 32 -րդ նստաշրջանում:

3. 2011 թ. ինստիտուտի ձեռքբերած նշանակալի արդյունքներն են պետբյուջեից ֆինանսավորվող թեմատիկ երկու թեմաների գծով կատարած զգալի աշխատանքները, հրատարակած գիտական հոդվածները և հրապարակումները:

«Հայոց պատմության հիմնահարցերի խեղաթյուրումը թուրք-ադրբեջանական պատմագրության մեջ» թեմայի (ղեկավար՝ պ.գ.դ. Է.Լ. Դանիելյան):

Ա.Ա. Խառատյանը հոկտեմբերի 10-27-ը մեկնել է գործուղման Ստամբուլ, գրադարաններում և մասնավոր հավաքածուներում հավաքել է նյութեր շրջանակներում, որոնք հիմնականում ընդգրկում են վերջին տարիների (2006-2011) խնդրո առարկա թեմայի շրջանակներում եղած հրատարակությունները:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում 2011 թ. նոյեմբերի 21-23-ին «Հայոց պատմության հիմնահարցերի խեղաթյուրումը թուրք-ադրբեջանական պատմագրության մեջ» թեմայի շրջանակներում հրավիրվեց՝ «Հայաստանի քաղաքակրթական ներդրումը Մետաքսի ճանապարհի պատմության մեջ» միջազգային գիտաժողով, արժևորվեց Հայոց քաղաքակրթական ժառանգության նշանակությունը «Մետաքսի ճանապարհի պատմության մեջ», բացահայտելով թուրք-ադրբեջանական կեղծարարության սնանկությունը:

Միջազգային գիտաժողովի ավելի քան 40 մասնակիցների թվում իրենց զեկուցումներով հանդես եկան «Հայոց պատմության հիմնահարցերի խեղաթյուրումը թուրք-ադրբեջանական պատմագրության մեջ» թեմայի կատարողները՝

Է.Լ.Դանիելյանը «Հայաստանի քաղաքակրթական ներդրումը Մետաքսի ճանապարհի պատմության մեջ և արդի մարտահրավերները», Ա.Ա. Խառատյանը «Հայ վաճառականությունը Լևանտի առևտրում (XVI–XVII դդ.)», Գ. Ս. Ստեփանյանը «Շիրվանահայերի դերը Արևելյան Այսրկովկասի առևտրատնտեսական հարաբերություններում» և Զ. Հ. Գևորգյանը «Այաս-Թավրիզ առևտրական մայրուղին Մետաքսի ճանապարհի համակարգում (XIII դ. երկրորդ կես – XIV դ. առաջին կես)» թեմաներով:

Թեմայի շրջանակներում հրատարակվել է Է.Լ. Դանիելյանի «Արցախյան հաղթանակի գաղափարական նշանակությունը տեղեկատվական պատերազմում՝ ընդդեմ թուրք-ադրբեջանական կեղծարարության» հոդվածը, որում Արցախյան ազատագրական պայքարի արդյունքում ձեռք բերած հաղթանակն իմաստավորվում է որպես գաղափարական հզոր զենք ընդդեմ թուրք-ադրբեջանական կեղծարարության:

Է.Լ. Դանիելյանի «Историческая справедливость против воинствующего мракобесия» հոդվածում հեղինակը պատմական սկզբնաղբյուրների և գիտական արդի գրականության խորը վերլուծության հիման վրա ցույց է տվել ադրբեջանական պաշտոնական պատմագիտության և պետական մակարդակի բարձրացված հայոց պատմության և պատմական աշխարհագրության կեղծարարության սնանկությունը:

Է.Լ. Դանիելյանի «Հայ Բագրատունյաց թագավորության Անի մայրաքաղաքի նշանակությունը մետաքսի ճանապարհի պատմության մեջ» «Անին միջնադարյան Հայաստանի քաղաքական և քաղաքակրթական կենտրոն» խորագրով միջազգային

գիտաժողովի զեկուցումների դրույթներում հեղինակը, արժևորելով Անի մայրաքաղաքի նշանակությունը մետաքսի ճանապարհի պատմության մեջ, միևնույն ժամանակ վեր է հանել և քննադատել Մետաքսի ճանապարհի՝ Արևմտյան Հայաստանի հետ կապված մասում հայկական պատմական հուշարձանների պատմության և դրանց ներկայացման թուրք կեղծարարությունը:

Է.Լ. Դանիելյանը «Power and Justice in International Relations. Interdisciplinary Approaches to Global Challenges, Edited by Marie-Luisa Frick and Andreas Oberprantacher, University of Innsbruck, Austria, Ashgate, December 2009, 284 pages» աշխատության մասին գրախոսությունում՝ վերլուծելով նրանում եղած հոդվածները, նշել է, որ միջազգային իրավունքի հետ կապված խնդիրները լուսաբանելիս, հատկապես Վերսալի 1920 թ. հունիսի 28-ի պայմանագրի առնչությամբ, պետք էր ներառել Հայոց ցեղասպանությանը վերաբերող փաստաթղթերը՝ Թուրքիայի ցեղասպան քաղաքականությունը միջազգային իրավունքի տեսանկյունից դատապարտելու համար:

Ա.Ա. Խառատյանը ««Թանգիմաթը» և Ազգային սահմանադրությունը թուրք պատմագրության գնահատմամբ» հոդվածում ցույց է տալիս, որ թուրքական մի խումբ պատմաբաններ «Թանգիմաթը» և Ազգային սահմանադրությունը համարում են օսմանյան կառավարությունից տրված շնորհ հայերին, և իբր դրանք ապահովել են նրանց ազգային ու քաղաքացիական իրավունքերը, հավասարությունը թուրք-մահմեդականների հետ: Իրականում դրանք ոչնչով չփոխեցին արևմտահայության կեղեքված վիճակը, հակառակ՝ վերոհիշյալ պատմագիտության ակնհայտ կեղծիքների:

Գ.Ս. Ստեփանյանը «Արևելյան Այսրկովկասի ժողովրդագրության խեղթությունը ադրբեջանական պատմագրության մեջ» ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդի նախաձեռնած՝ “Պատմություն և մշակույթ”. Ընդդեմ կեղծիքի և ոտնձգության, հանրապետական գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներում ներկայացնում է ադրբեջանական պաշտոնական պատմագիրտության կեղծարարությունը և Արևելյան Այսրկովկասի ժողովրդագրական գործընթացների խեղաթյուրման մեջ:

Ա. Մ. Վարդանյանի տպագրության հանձնված «Դարձյալ վրացական և ադրբեջանական խեղաթյուրումների շուրջ» հոդվածում, քննելով Կուր գետի ձախափնյակում գտնվող Կամբեճան գավառի մասին հունահռոմեական պատմիչներ Ստրաբոնի, Պլուտարքոսի, Դիոն Կասիոսի վկայությունները, որոնք գավառը համարում են հայկական, վեր է հանել վրացի ու ադրբեջանցի պատմաբանների կողմից սկզբնաղբյուրների տեղեկությունների խեղաթյուրումները: Վերջիններս նշում են, որ գավառը պատկանել է մեկ Վիրքին, մեկ

Ադրբեջանին: Հեղինակը, սակայն, հենվելով սկզբնաղբյուրների վրա՝ հիմնավորում է, որ Կամբեճան գավառը հայկական պետականության ողջ ընթացքում եղել է նրա կազմում, իսկ «Ադրբեջան» այդ տարածքում գոյություն չի ունեցել:

«Ազգերի լիգան և Հայաստանը 1920-1929 թթ.» թեմայի (ղեկավար՝ պ. գ. թ. Ս. Ռ. Ավետիսյան) շրջանակներում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. ուսումնասիրվել են Հայաստանի ազգային արխիվի՝ ազգերի լիգային վերաբերող ֆոնդերը, ինչպես նաև՝ թեմային վերաբերող գրականության որոշ մասը:
2. թեմայի ավագ գիտաշխատող Էդիտա Գոգյանը 2011 թ. սեպտեմբերի 17-25-ը գործուղվել է Շվեյցարիա, որտեղ աշխատել է Ազգերի լիգայի արխիվում:
3. Ներկա փուլում կատարվում է Հայաստանի ազգային արխիվի և Ազգերի լիգայի արխիվից բերված նյութերի թարգմանությունը, որոնց ճնշող մեծամասնությունը ֆրանսերեն և անգլերեն լեզուներով են:
4. Հաշվետու տարում ուսումնասիրության հիմնական շեշտը դրվել է Ազգերի լիգայում Հայաստանի մանդատի և անդամակցության հարցերի քննարկմանը:

Թեմայի շրջանակներում հրատարակվել է երեք հոդված, որից մեկը արտասահմանում:

Էդիտա Գոգյանի «Ազգերի լիգային անդամակցելու համար Հայաստանի Հանրապետության ձեռնարկած քայլերը» հոդվածում քննարկվում է Հայաստանի Հանրապետության անդամակցության հարցը Ազգերի լիգային, ներկայացվում է Ազգերի լիգայի մարմիններում անդամակցության հարցի քննարկումը, ինչպես նաև փորձ է կատարվում վերլուծել անդամության մերժման պատճառները:

Էդիտա Գոգյանի «Անդրկովկասյան հանրապետությունների՝ Ազգերի լիգային անդամակցելու հարցը» հոդվածն անդրադառնում է Ազգերի լիգային՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի անդամակցության գործում խորհրդային Ռուսաստանի խաղացած դերին: Հեղինակը փորձում գնահատել վերջինիս ազդեցությունը անդամության մերժման հարցում:

Էդիտա Գոգյանի՝ Մեծ Բրիտանիայի Բրադֆորդ համալսարանի «Կենտրոնական և Արևելյան Եվրոպական հանդես»-ում հրատարակած «The Turkish-Armenian war of 1920 and the League of Nations» հոդվածում քննարկվում և վերլուծվում է 1920 թ. թուրք-հայկական պատերազմի դերն Ազգերի լիգային Հայաստանի Հանրապետության անդամակցության հարցում:

4. Կիրառական մշակումներ /չկան/

5. Ինստիտուտի կողմից 2011 թ. հրապարակումների ցանկը

ա/ Մենագրություններ, աշխատություններ, ժողովածուներ, ձեռնարկներ

1. Աբրահամյան Հ., Կենսամատենագիտություն, Եր., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2011, 48 էջ + նկարներ:

2. Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIX դ.–XX դ. սկիզբ). փաստաթղթերի և նյութերի ժողովածու, աշխատասիրությամբ Ա. Ս. Հայրապետյանի, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, 271 էջ:

3. Ալեքսանյան Հ. Ս., Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917-1941 թթ., Եր., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2011, 221 էջ:

4. Ավետիսյան Ս., Կարբիի տոհմագրությունը, Եր., ԵՊՀ հրատ., 2011, 240 էջ + 4 էջ ներդիր:

5. Ավետիսյան Ս., Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեի /Ամերկոմ/ գործունեությունը Հայաստանում և Մերձավոր Արևելքի հայաշատ շրջաններում 1918-1930 թթ. /ուսումնական ծրագիր/, Եր., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 20 էջ:

6. Դանիելյան Ն., Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի պատմահոգևոր համակարգը և Աստվածաշունչը, Եր., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2011, 224 էջ:

7. Թինոյան Դ. Ֆ., Կիլիկիո հայոց թագավորությունը և ինքնիշխան կազմավորումները 1320-1424 թթ., Եր., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2011, 195 էջ:

8. Լեռնային Ղարաբաղի հանրապետություն (1991 թ. օգոստոս-1992 թ. հունվար), փաստաթղթեր, կազմող Հրանտ Աբրահամյան, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, 196 էջ:

9. Ծովի մշակույթը՝ մարդկության մշակույթն է քաղաքակրթությունների երկխոսությունում: «Այաս» Ծովային Հետազոտությունների Ակումբի 25-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, 2010 թ. մայիսի 14-16-ը, Եր., Մուղնի, 2011, 348 էջ:

10. Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), Եր., ՀՀ ԳԱԱ պատմ. Ինստ, հտ. 12-րդ, 305 էջ:

11. Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես-XIX դարի վերջ), Եր., Ձանգակ-97, 704 էջ + 24 էջ ներդիր:

12. Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945 թթ.), Եր., Ձանգակ-97, 800 էջ + 24 էջ ներդիր:

13. Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Կազմողներ և խմբագիրներ՝ Կ. Խաչատրյան, Հ. Աբրահամյան), Եր., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2011, 175 էջ:

14. Հարությունյան Կ., Հարությունյան Կ., Հայ գորավարներ, Եր., “Ձանգակ-97” , 2011, 160 էջ:

15. Մելքոնյան Ա. Ա., Կենսամատենագիտություն, Եր., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2011, 80 էջ + նկարներ:
16. Մելքոնյան Ա., Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր, Եր., 2011, 556 էջ:
17. Մեծ Եղեռն. Դատապարտումից հատուցում (Հողվածների ժողովածու), Եր., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2011, 106 էջ:
18. Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյան, Կենսամատենագիտություն, Եր., Պատմության ինստիտուտ, Հայաստանի ազգային գրադարան, 2011, 216 էջ:
19. Պողոսյան Բ., Թուրք-ամերիկյան հարաբերությունները և ԱՄՆ կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը 1991-2007 թթ., Եր., ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2011, 78 էջ:
20. Ստեփանյան Գ., Բաքու քաղաքի հայության պատմությունը (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Եր., Պատմ. ինստ., 2011, 650 էջ:
21. Վլադիմիր Ղազախեցյան, Կենսամատենագիտություն, Եր., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2011, 38 էջ:
22. Армения в документах Государственного департамента США 1917-1920 гг. /Сост. и пер. с англ. Г. Г. Махмурян. Ред. В. Казахеян.-Ер.: Ин-т. истории НАН Армении; 2011.- 560 стр.
23. Арутюнян К., Участие сынов армянского народа в героической обороне Ленинграда (10 июля 1941 г. – 9 августа 1944 г.), Ер., изд-во “Гитутюн” НАН РА, 2011, 172 с. + 1,5 п.л. илл.
24. Погосян В.А., В окружении историков (сборник статей и рецензий), Отв. ред. А.В. Чудинов, Ер., Эдит Принт, 2011, 264 с.

բ/ Հողվածներ

1. Աբրահամյան Հ., Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը / Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945 թթ.), Եր., Զանգակ-97, էջ 614-618:
2. Աբրահամյան Հ., Արցախի հիմնախնդիրը 19-րդ դարում / Մ. Մաշտոցի անվան համալսարանի «Լրատու», Ստեփանակերտ, 2011, թիվ 1, էջ 4-19:
3. Աբրահամյան Հ., ՀՀ դաշնությունը Արցախում (1989-1992 թթ.) / Դրոշակ, 2011, թիվ 1, էջ 4-9:
4. Աբրահամյան Հ., ՀՀ դաշնությունը Արցախում (1989-1992 թթ.) / Դրոշակ, 2011, թիվ 2, էջ 4-9:
5. Աբրահամյան Հ., Այն հուզումնալից օրերին, հրապարակում / Դրոշակ, 2011, թիվ 4, էջ 13-16:
6. Աբրահամյան Հ., Արցախի հիմնախնդիրը խորհրդային տարիներին /1920-1988 թթ./ / Մ. Մաշտոցի անվան համալսարանի “Լրատու”, Ստեփանակերտ, թիվ 2, 2011, էջ 4-19:

7. Աբրահամյան Հ., Արցախի հիմնախնդիրը 20-րդ դարի սկզբին / Խաղաղ Կովկասը՝ տարածաշրջանի զարգացման գործոն, Միջազգային գիտաժողովի նյութեր՝ նվիրված ԼՂՀ և ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձին, ԼՂՀ ԿԳՆ, Մեսրոպ Մաշտոց համալսարան, 4.11.1911 թ.: Եր., Լիմուշ հրատարակչություն, 2011, էջ 167-182:
8. Ալեքսանյան Հ., Ռուսաստանում, Ուկրաինայում և Բելոռուսիայում / Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945 թթ.), Եր., Զանգակ-97, էջ 595-600:
9. Ալեքսանյան Հ., Միջինասիական խորհրդային հանրապետություններում / Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945 թթ.), Եր., Զանգակ-97, էջ 601-603:
10. Ալեքսանյան Հ., Հայերի տեղաբաշխումը Խորհրդային Ադրբեջանում և Վրաստանում / Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945 թթ.), Եր., Զանգակ-97, էջ 604-614:
11. Ալեքսանյան Հ., Լ.Ա. Ասոյան, Հայերը ռուսական կայսրությունում XIX դ. վերջին. պատմաժողովրդագրական հետազոտություն (ըստ 1897 թ. համառուսաստանյան մարդահամարի տվյալների) (գրախոսություն) / ԼՀԳ, 2011, N 4, էջ 313-315:
12. Առաքելյան Գ. Ռ., Քաղաքական ու տնտեսական կյանքի աշխուժացումը / Հայոց պատմություն, հ. 3, գիրք 1, Նոր ժամանակաշրջան (XVII դ. երկրորդ կես-XIX դ. վերջ), Եր., Զանգակ-97, 2010, էջ 384-388:
13. Առաքելյան Գ. Ռ., 1860-1870-ական թթ. Վարչատնտեսական բարենորոգումները և Հայաստանը / Հայոց պատմություն, հ. 3, գիրք 1, Նոր ժամանակաշրջան (XVII դ. երկրորդ կես-XIX դ. վերջ), Եր., Զանգակ-97, 2010, էջ 388-394:
14. Առաքելյան Գ. Ռ., Մուրադյան Դ., Վարչատարածքային բաժանումը և վարչակարգը / Հայոց պատմություն, հ. 3, գիրք 1, Նոր ժամանակաշրջան (XVII դ. երկրորդ կես-XIX դ. վերջ), Եր., Զանգակ-97, 2010, էջ 575-577:
15. Առաքելյան Գ. Ռ., Մուրադյան Դ., Կապիտալիստական հարաբերությունների արմատավորումը տնտեսության մեջ / Հայոց պատմություն, հ. 3, գիրք 1, Նոր ժամանակաշրջան (XVII դ. երկրորդ կես-XIX դ. վերջ), Եր., Զանգակ-97, 2010, էջ 577-584 :
16. Առաքելյան Գ. Ռ., Մուրադյան Դ., Հայ ազգաբնակչության սոցիալական տեղաշարժերը և դրանց առանձնահատկությունները / Հայոց պատմություն, հ. 3, գիրք 1, Նոր ժամանակաշրջան (XVII դ. երկրորդ կես-XIX դ. վերջ), Եր., 2010, էջ 584-589:

17. Ավագյան Ք., Ամերիկահայերի հասարակական-քաղաքական գործունեությունը Սևրի պայմանագրի նախորդող տարիներին / Մեծ Եղեռն. Դատապարտումից հատուցում (գիտական հոդվածների ժողովածու), Եր., 2011, էջ 50-63:
18. Ավագյան Ք., Հայերի արտահոսքը ԱՄՆ և կապը բնօրրանի հետ սկզբնավորումից մինչև 1985 թ. / Հայ գաղթականությունը և Հայրենիք-սփյուռք կապերը 1918-1985 թթ., Միջազգային գիտաժողով 8-10 հոկտեմբեր 2011, Երևան-Ծաղկաձոր, զեկուցումներ, ՀՀ Ազգային Արխիվ, Եր., 2011, էջ 16-40:
19. Ավագյան Ք., Ակնարկ ամերիկահայ հայրենակցական միությունների պատմության / Մովսես Խորենացի. Գիտական, պատմաբանասիրական, բնագիտական հանդես, Եր., թիվ 1-2, 2011, էջ 58-65:
20. Ավագյան Ք., Ամերիկահայության հասարակ-քաղաքական գործունեությունը Հայոց ցեղասպանության տարիներին / Ազդակ Ապրիլեան Բացառիկ, Պեյրութ, 2011, էջ 81-89:
21. Ավետիսյան Ս., Փաստաթղթեր 1920-ական թվականներին Անգլիական օգնության կոմիտեի /Անգլկոմ/՝ Հայաստանում ծավալած գործունեության մասին / ԲՀԱ, 2011, թիվ 1, էջ 68-78:
22. Բախչինյան Ա., Հայերը Չինաստանում 1900-1950-ական թթ. Ակնարկներ / Հայկազեան հայագիտական հանդես, 2011, հատոր ԼԱ, էջ 169-194:
23. Բախչինյան Ա., Հայաստանի մայր. Ուրվագիծ Դիանա Աբգարի կյանքի ու գործունեության / Դիանա Աղաբեկ Աբգար. Կյանքը և գործունեությունը, Նոր Ջուղա, 2011, էջ 8-28:
24. Բախչինյան Ա., Հայերեն նամակներ Դիանա Աբգարից / Դիանա Աղաբեկ Աբգար. Կյանքը և գործունեությունը, Նոր Ջուղա, 2011, էջ 29-35:
25. Բարխուդարյան Վ. Բ., Համառոտ Ուրուագիծ Մոսկուայի եւ Պետերբուրգի Հայկական Համայնքների Եկեղեցական Խորհուրդների Գործունեության (1883-1918 թթ.) / Հայկազեան Հայագիտական Հանդես, հ. ԼԱ., Պեյրութ, 2011, էջ 91-109:
26. Բարխուդարյան Վ. Բ., Հայ ազատագրական շարժումները XVIII դարի 50-60-ական թթ. / Հայոց պատմություն հ. 3, գիրք 1, Նոր ժամանակաշրջան (XVII դ. երկրորդ կես-XIX դ. վերջ), Եր., Չանգակ-97, 2010, էջ 70-78:
27. Բարխուդարյան Վ. Բ., Հայաստանը և հայ ազատագրական շարժումները XVIII դարի վերջին երեսնամյակում / Հայոց պատմություն հ. 3, գիրք 1, Նոր ժամանակաշրջան (XVII դ. երկրորդ կես-XIX դ. վերջ), Եր., Չանգակ-97, 2010, էջ 151-179:
28. Գասպարյան Ռ. Հ., Հայ հեղափոխական դաշնակցության գործունեությունը Կիլիկիայում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին / ԼՀԳ, № 3, 2010, էջ 5-22:

29. Գասպարյան Ռ. Հ., Իրադարձությունը Կիլիկիայում: Հայերի ինքնապաշտպանական մարտերը և կոտորածները / Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945 թթ.), Եր., Ջանգալ-97, էջ 211-218:
30. Գասպարյան Ռ. Հ., Կիլիկիայի հայ ազգաբնակչությունը և վարչական բաժանումը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին / ԼՀԳ, № 1-2, 2011, էջ 20-29:
31. Գասպարյան Ռ. Հ., Արխիվային վավերագրեր Կիլիկիայում Ս.Դ.Հնչակյան կուսակցության գործունեության մասին / ՊԲՀ, № 2, 2011, էջ 245-255:
32. Գոգյան Է., Ազգերի լիզային անդամակցելու համար Հայաստանի Հանրապետության ձեռնարկած քայլերը / ԲԵՀ, 2011, էջ 16-30:
33. Գոգյան Է., Անդրկովկասյան հանրապետությունների՝ Ազգերի լիզային անդամակցելու հարցը / ԼՀԳ, 2011, N 3, էջ 61-72:
34. Գրիգորյան Մ., 862 թ. Շիրակավանի եկեղեցական ժողովը / Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), Եր., ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ, 2011, հտ. 12, էջ 54-72:
35. Գևորգյան Ջ., Կիլիկյան Հայաստանը միջերկրածովյան առևտրական նավագնացության հանգուցակետում (XIII-XIV դդ.) / «Այաս» Ծովային Հետազոտությունների Ակումբի 25-ամյակին նվիրված 2010 թ. մայիսի 14-16-ին ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում տեղի ունեցած «Ծովի մշակույթը՝ մարդկության մշակույթն է քաղաքակրթությունների երկխոսությունում» խորագրով գիտաժողովի նյութեր, Եր., 2011, էջ 28-38:
36. Գևորգյան Ջ., Աշխարհաքաղաքական գործընթացները և միջազգային առևտուրը Կիլիկյան Հայաստանում (1201-1337 թթ.) / Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), Եր., ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ, 2011, հտ. 12, էջ 102-132:
37. Դանիելյան Է., Արցախյան հաղթանակի գաղափարական նշանակությունը տեղեկատվական պատերազմում՝ ընդդեմ թուրք-ադրբեջանական կեղծարարության / Պատմություն և մշակույթ. ընդդեմ կեղծիքի և ոտնձգության, հանրապետական գիտաժողովի հիմնադրույթներ, Եր., էջ 32-33:
38. Դանիելյան Է., Արցախյան հաղթանակի գաղափարական նշանակությունը տեղեկատվական պատերազմում՝ ընդդեմ թուրք-ադրբեջանական կեղծարարության / Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն, N 4 (16), էջ 35-40:
39. Դանիելյան Է., Հայոց քաղաքակրթական ներդրումը հին և միջնադարյան տնտեսական ու աշխարհաքաղաքակն գործընթացներում / Ծովի մշակույթը՝ մարդկության մշակույթն է քաղաքակրթությունների երկխոսություններում, Եր., էջ 23-27:

40. Դանիելյան Է., Հայաստան-Եգիպտոս. Հայագիտական կամուրջ / Գլորուս. Ազգային անվտանգություն, թիվ 1(17), էջ 38-43:
41. Դանիելյան Է., Հայ Բագրատունյաց թագավորության Անի մայրաքաղաքի նշանակությունը մետաքսի ճանապարհի պատմության մեջ / Միջազգային գիտաժողով. Անիան միջնադարյան Հայաստանի քաղաքական և քաղաքակրթական կենտրոն, Ջեկուցումների դրույթներ, Եր., էջ 23-24:
42. Դումիկյան Ա., Տայքը (Դայանի / Դիաուխի) սեպագիր արձանագրություններում և հայկական միջնադարյան սկզբնաղբյուրներում / Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), Եր., ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ, 2011, հտ. 12, էջ 3-25:
43. Երանոսյան Ն., 1894-1896 թթ. հայկական կոտորածների արձագանքները Եգիպտոսի «Ալ-Մուշիր» պարբերականում / Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), Եր., ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ, 2011, հտ. 12, էջ 219-235:
44. Չաքարյան Լ., Մասնագիտական և քաղաքական մասնակցության գենդերային տեսանկյունները / Հայաստանում հասարակական-քաղաքական մասնակցության գենդերային առանձնահատկությունները, «Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոնի գեկույց սոցիոլոգիական հետազոտության արդյունքերի վերաբերյալ, ՄԱԲՀ, Եր., 2011, էջ 19-38:
45. Չաքարյան Լ., Անկախության գաղափարի արմատավորումը հայ հասարակական գիտակցության մեջ. անկախության հռչակագրից հանրաքվե / Հումանիտար գիտությունների արդի հիմնախնդիրները, Հյուսիսային համալսարանի հրատարակչություն, Եր., 2011, էջ 109-123:
46. Չաքարյան Լ., Քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում / Կրթական բարեփոխումներ. ազգային լավագույն ավանդույթները և միջազգային առաջավոր փորձը, Հյուսիսային համալսարանի գիտական կոնֆերանսի նյութեր, Եր., 2010, էջ 137-150:
47. Չաքարյան Լ., Տեղական ինքնակառավարման համակարգի կառավարման համակարգը / Տավուշի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի, Սյունիքի և Արարատի մարզերում համայնքային և տնտեսական զարգացման գենդերային տեսանկյունները: Վերլուծական գեկույց / համահեղինակներ՝ Ջ. Հասրաթյան, Հ. Մարգարյան, Գ. Միրոյան, Եր., 2011, էջ 17-36:
48. Չաքարյան Լ., Մամուլը / Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945 թթ.), Եր., Չանգակ-97, էջ 706-720:

49. Թինոյան Դ., Կիլիկիո կաթողիկոսության հարաբերությունները Էջմիածնի ամենայն Հայոց կաթողիկոսության հետ Սիմեոն Սեբաստացու աթոռակալման շրջանում / ԼՀԳ, 2011, 1-2 էջ 69-78:
50. Թոխատյան Կ., Հայկական լեռնաշխարհի ժայռապատկերների հայկական ժառանգական պատկանելության նենգափոխումը թուրք-ադրբեջանական կեղծարարների կողմից / Պատմություն և մշակույթ. ընդդեմ կեղծիքի և ոտնձգության, հանրապետական գիտաժողովի հիմնադրույթներ, 5 մայիսի, Եր., 2011, էջ 65: 66 նկար-էջ:
51. Թոխատյան Կ., Դիցաբանական հինավուրց մի պատումի արտացոլումը ժայռապատկերներում / Ճարտարապետաքաղաքաշինական մտավոր ժառանգության պահպանության խնդիրներն ու զարգացման հեռանկարները, միջազգային գիտաժողովի զեկ. հիմնադրույթներ, 18 նոյեմբերի, Եր., 2011, էջ 22-25: 24 նկար-էջ:
52. Թորոսյան Վ., Ջաքարյան Հայաստանի և Կիլիկյան Հայաստանի աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունները Լևոն Ա-ի իշխանության տարիներին (1187-1219) / «Ծովի մշակույթը՝ մարդկության մշակույթն է քաղաքակրթությունների երկխոսությունում», «Այաս» ծովային հետազոտությունների ակումբի 25-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Եր., 2011, էջ 11-17:
53. Թորոսյան Վ., Կիլիկյան Հայաստանի և Ջաքարյան Հայաստանի աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունները Հեթում Ա-ի իշխանության տարիներին (1226-1270) / «Պատմություն և մշակույթ», հայագիտական հանդես, հ. Ա, Եր., 2011, էջ 297-305:
54. Թորոսյան Վ., Պարոնտերության ինստիտուտի ձևավորումն ու զարգացումը Հայաստանում (XI-XIV դդ.) / ԼՀԳ, 2011, N 1, էջ 30-42:
55. Թորոսյան Վ., Ականավոր բյուզանդագետը. ակադեմիկոս Հրաչ Բարթիկյանի հիշատակին / ՎԷՄ, Եր., 2011, էջ 215-220:
56. Խաչատրյան Գ., Հայ գյուղը Հայրենական պատերազմի նախօրյակին / Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2011, առաջին պրակ, էջ 173-181:
57. Խաչատրյան Գ., Խորհրդային Հայաստանում արվեստի պատմության դասավանդման հարցերի մեթոդաբանությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին / Տեղեկագիր Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, Եր., 2011, N 3, էջ 46-53:

58. Խաչատրյան Գ., Տնտեսության վերակառուցումը: «Ամեն ինչ ռազմաճակատի, ամեն ինչ հաղթանակի համար» / Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945 թթ.), Եր., Ջանգակ-97, էջ 579-588:
59. Խաչատրյան Կ., Հանրապետությունների ռազմաքաղաքական համագործակցությունը Լոռու չեզոք գոտին ազատագրելու գործում: Վրաստանի խորհրդայնացումը / Հայոց հյուսիսային դարպասները. Ջավախք, Լոռի /Հողվածերի ժողովածու/, հ. 6, Եր., «Միտք», 2011, էջ 369-380:
60. Խաչատրյան Կ., Գալոյան Գ., Հայկական հարցը Փարիզի խաղաղության վեհաժողովում: Սերի պայմանագիրը / Հայոց պատմություն, Հատոր IV, Գիրք Առաջին / Նորագույն ժամանակաշրջան. 1918-1945 թթ./, Եր., Ջանգակ-97, 2010, էջ 142-164:
61. Խաչատրյան Կ., Քեմալական Թուրքիայի հայաջինջ քաղաքականությունը / Հայոց պատմություն, Հատոր IV, Գիրք Առաջին /Նորագույն ժամանակաշրջան. 1918-1945 թթ./, Եր., Ջանգակ-97, 2010, էջ 211-218:
62. Խաչատրյան Կ., Հայաստանի խորհրդայնացումը / Հայոց պատմություն, Հատոր IV, Գիրք Առաջին /Նորագույն ժամանակաշրջան. 1918-1945 թթ./, Եր., Ջանգակ-97, 2010, էջ 276-286:
63. Խաչատրյան Կ., Լոռու չեզոք գոտու ազատագրումը / Հայոց պատմություն, Հատոր IV, Գիրք Առաջին /Նորագույն ժամանակաշրջան. 1918-1945 թթ./, Եր., Ջանգակ-97, 2010, էջ 313-318:
64. Խաչատրյան Կ., Խորհրդային Ռուսաստանի օգնությունը / Հայոց պատմություն, Հատոր IV, Գիրք Առաջին /Նորագույն ժամանակաշրջան. 1918-1945 թթ./, Եր., Ջանգակ-97, 2010, էջ 380-385:
65. Խաչատրյան Կ., Հայաստանի խորհուրդների առաջին համագումարը: ՀՄԽՍՍ սահմանադրությունը / Հայոց պատմություն, Հատոր IV, Գիրք Առաջին / Նորագույն ժամանակաշրջան. 1918-1945 թթ./, Եր., Ջանգակ-97, 2010, էջ 389-393:
66. Խաչատրյան Կ., Անդրդաշնության և ԽՍՀՄ կազմավորումը / Հայոց պատմություն, Հատոր IV, Գիրք Առաջին /Նորագույն ժամանակաշրջան. 1918-1945 թթ./, Եր., Ջանգակ-97, 2010, էջ 402-412:
67. Խառատյան Ա., Թանգիմաթը և Ազգային սահմանադրությունը թուրքական պատմագիտության մեկնաբանությամբ / Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, 2011, N 2, էջ 174-180:
68. Խառատյան Ա., Տիգրան Հարություն Տետեյան / Գիտության աշխարհում, 2011, N 4:
69. Խառատյան Ա., Լեոն հայ մամուլի պատմաբան / Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), Եր., ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ, 2011, հտ. 12, էջ 182-201:
70. Խառատյան Ա., «Մարմնամարզ» հանդեսը / ՊԲՀ, 2011, N 4, էջ:

71. Խառատյան Ա., Հայ հասարակական հոսանքներն ու շարժումները / Հայոց պատմություն, հ. 3, գիրք 1, Նոր ժամանակաշրջան (XVII դ. երկրորդ կես-XIX դ. վերջ), Եր., Զանգակ-97, 2010, էջ 363-384:
72. Խառատյան Ա., Զեյթունի 1862 թ. Ապստամբությունը և նրա համահայկական արձագանքները / Հայոց պատմություն, հ. 3, գիրք 1, Նոր ժամանակաշրջան (XVII դ. երկրորդ կես-XIX դ. վերջ), Եր., Զանգակ-97, 2010, էջ 406-413:
73. Խուղինյան Գ., Հայ Յեղափոխական Դաշնակցության գաղափարախոսության համամարդկային ակունքները / Հայ չեղափոխական դաշնակցության հիմնադրման 115 և 120-ամյակներին նվիրված գիտաժողովների նյութեր, «Հայ դատ» մատենաշար, թիվ 3, Եր., 2011, էջ 7-14:
74. Խուղինյան Գ. Ս., Հայ հեղափոխական դաշնակցություն / Հայոց պատմություն հ. 3, գիրք 1, Նոր ժամանակաշրջան (XVII դ. երկրորդ կես-XIX դ. վերջ), Եր., Զանգակ-97, 2010, էջ 498-506:
75. Կարապետյան Ա., Արևմտահայկական իրականությունը հայ քաղաքական կուսակցությունների կազմավորման նախօրյակին / «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, թիվ Ա, 2011, էջ 66-73:
76. Կարապետյան Ա., Գիտնականների կեսդարյա ուղին / ԼՀԳ, թիվ 1-2, 2011, էջ 421-424:
77. Կարապետյան Ա., Ռուբեն Միրզախանյան, Խորհրդահայ մշակույթը 1956-1999 թթ., (գրախոսություն) / ԼՀԳ, թիվ 3, 2011, էջ 295-298:
78. Կարապետյան Ա., Նա գալիս էր Արևմտահայաստանից / Դրոշակ, ապրիլ, թիվ 4, 2011, էջ 42-43:
79. Կարապետյան Հ. Հ., Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և Գանձասարի կաթողիկոսությունը ազատագրական պայքարի ուղեծրում / Էջմիածին ամսագիր, 2011, N Ը, էջ 113-117:
80. Կարապետյան Հ. Հ., Հայ ազատագրական պայքարի գործում Իսրայել Օրիի և հայ հոգևորականության համագործակցության շուրջ / Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), Եր., ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ, 2011, հտ. 12, էջ 151-162:
81. Կոստանյան Է. Ա., Հայ եկեղեցու անվանի գործիչն ու գիտնականը (Մ. Օրմանյանի ծննդյան 170-րդ տարելիցի առթիվ) / ԼՀԳ, N° 3, 2011, էջ 19-32:
82. Կոստանյան Է. Ա., Գրիգոր Զոհրապն արևմտահայոց Ազգային ժողովում և օսմանյան խորհրդարանում / Վեմ, 2011, N 4, էջ XXII-XXXIII:
83. Կոստանյան Է., Մելքոնյան Ա., Առաջաբան / Հայոց պատմություն, հ. 3, գիրք 1, Նոր ժամանակաշրջան (XVII դ. երկրորդ կես-XIX դ. վերջ), Եր., Զանգակ-97, 2010, էջ էջ 3-10:
84. Կոստանյան Է. Ա., Երկանյան Վ., Հայ մշակույթի օջախները / Հայոց պատմություն, հ. 3, գիրք 1, Նոր ժամանակաշրջան (XVII դ. երկրորդ կես-XIX դ. վերջ), Եր., 2010, էջ 308-311:

85. Կոստանդյան Է. Ա., Երկանյան Վ., Կրթական կյանք / Հայոց պատմություն, հ. 3, գիրք 1, Նոր ժամանակաշրջան (XVII դ. երկրորդ կես-XIX դ. վերջ), Եր., Ջանգակ-97, 2010, էջ 311-316:
86. Կոստանդյան Է. Ա., Ճշգրիտ գիտություններ / Հայոց պատմություն, հ. 3, գիրք 1, Նոր ժամանակաշրջան (XVII դ. երկրորդ կես-XIX դ. վերջ) Եր., Ջանգակ-97, 2010, էջ 340-342:
87. Կոստանդյան Է. Ա., Արևելահայ առաջին ազատագրական խմբակների գործունեությունը / Հայոց պատմություն, հ. 3, գիրք 1, Նոր ժամանակաշրջան (XVII դ. երկրորդ կես-XIX դ. վերջ), Եր., Ջանգակ-97, 2010, էջ 394-399:
88. Կոստանդյան Է. Ա., Հովհաննիսյան Ռ., Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը / Հայոց պատմություն, հ. 3, գիրք 1, Նոր ժամանակաշրջան (XVII դ. երկրորդ կես-XIX դ. վերջ), Եր., Ջանգակ-97, 2010, էջ 414-448:
89. Կոստանդյան Է. Ա., Հայերի ազգային և սոցիալական ճնշումների ուժեղացումը Օսմանյան կայսրությունում / Հայոց պատմություն, հ. 3, գիրք 1, Նոր ժամանակաշրջան (XVII դ. երկրորդ կես-XIX դ. վերջ), Եր., Ջանգակ-97, 2010, էջ 456-461:
90. Կոստանդյան Է., Ազատագրական խմբակների ձևավորումը և գործունեության ընդլայնումը Արևմտյան Հայաստանում / Հայոց պատմություն, հ. 3, գիրք 1, Նոր ժամանակաշրջան (XVII դ. երկրորդ կես-XIX դ. վերջ), Եր., Ջանգակ-97, 2010, էջ 461-473:
91. Կոստանդյան Է. Ա., Հայդուկային շարժման նախաքայլերը / Հայոց պատմություն, հ. 3, գիրք 1, Նոր ժամանակաշրջան (XVII դ. երկրորդ կես-XIX դ. վերջ), Եր., Ջանգակ-97, 2010, էջ 473-482 :
92. Կոստանդյան Է. Ա., Ջեյթունի 1895-1896 թթ. ապստամբությունը / Հայոց պատմություն, հ. 3, գիրք 1, Նոր ժամանակաշրջան (XVII դ. երկրորդ կես-XIX դ. վերջ), Եր., Ջանգակ-97, 2010, էջ 549-557:
93. Կոստանդյան Է. Ա., Հայդուկային շարժումը XIX դարի 90-ական թթ. երկրորդ կեսին / Հայոց պատմություն, հ. 3, գիրք 1, Նոր ժամանակաշրջան (XVII դ. երկրորդ կես-XIX դ. վերջ), Եր., Ջանգակ-97, 2010, էջ 562-575:
94. Հակոբյան Ա., Փետրվարյան ապստամբությունը հայ պատմագրության մեջ /Քննական գուգակշիռներ` 90-ամյա հեռավորությունից// ՎԷՄ, 2011, թիվ 1 /33/, հունվար-մարտ, էջ 132-158:
95. Հակոբյան Ա., 1921 թ. Փետրվարյան ապստամբության բնույթի և շարժիչ ուժերի հարցերը հայ պատմագրության մեջ /90-ամյակի առթիվ// Դրօշակ, թիվ 03 /1630/, 2011, էջ 14-23:
96. Հակոբյան Ա., Հայ յեղափոխական դաշնակցության պետական գործունեությունը /1918-1920 թթ./ / Հայ յեղափոխական դաշնակցության հիմնադրման 115 և 120-ամյակներին նվիրված գիտաժողովի նյութեր, Եր., 2011, էջ 47-55:

97. Հակոբյան Ա., 1921 թ. Փետրվարյան ապստամբության շրջանում Հայիեղկոմի և ՀՓԿ գործադրած տեռորի հարցի շուրջ / Դրօշակ, թիվ 07 /1634/, Եր., 2011, էջ 12-17:
